ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՐԹԱԿ

h.1270083
30-09-2024թ.
Նախընտրած ծանուցման ձևը՝
Էլ.փոստի միջոցով

Հասցեատեր՝ *Լոռու մարզպետարան*

Դիմող՝ *ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՕՐԱԿԱՐԳ ՀԿ*
Հասցե՝ ԵՐԵՎԱՆ, 0015, ԿԵՆՏՐՈՆ,
ՍՈՒՐԲ ԳՐ. ԼՈՒՍԱՎՈՐՉԻ Փ., 12,
lilit@dra.am : 37477053899

ՀԱՐՑՈՒՄ

ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում եմ տրամադրել տեղեկություններ.

Հարգելի՛ պարոն Ղազարյան,

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների օրակարգ» հասարակական կազմակերպությունը «Իրավունքներ, ծառայություններ և մասնակցություն. Հայաստանում հոգեկան առողջության համապարփակ շրջանակի խթանում» ծրագրի շրջանակներում նախաձեռնել է իրականացնել հոգեկան առողջության ծառայությունների ապակենտրոնացման վերաբերյալ հետազոտություն։

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել հոգեկան առողջության ծառայությունների ապակենտրոնացման գործընթացը և դրա հիման վրա մշակել առաջարկություններ, որոնք ուղղված կլինեն Հայաստանում ապակենտրոնացման գործընթացի պլանավորմանը, իրականացմանը և մշտադիտարկմանը։

Հետազոտության շրջանակներում խորը և համապարփակ վերլուծություն կատարելու համար կազմակերպությանն անհրաժեշտ են տեղեկություններ մարզում գործող առողջապահական հաստատություններում, այդ թվում առողջության առաջնային պահպանման օղակներում, հոգեբուժական ծառայությունների և սպասարկման վերաբերյալ։ Մասնավորապես, անհրաժեշտ են մարզի առողջապահական հաստատությունների ցանկը համապատասխանաբար այն տեղեկատվությամբ, թե որտեղ է.

ա) առկա բժիշկ-հոգեբույժ (հաստիքը զբաղեցված է)

բ) բժիշկ-հոգեբույժ առկա չէ, միևնույն ժամանակ հոգեբուժական օգնության և սպասարկման համապատասխան ծառայությունները մատուցվում են փաստացի ընտանեկան բժշկի կողմից

գ) փաստացի հոգեբուժական օգնություն և սպասարկում չի իրականացվում, քանի որ առկա չէ բժիշկ-հոգեբույժ, և ընտանեկան բժիշկը չի անցել համապատասխան վերապատրաստում։

Միևնույն ժամանակ կարիք կա կազմակերպել հարցազրույցներ որոշում կայացնողների, ոլոտային պաշտոնյաների, համագործակից կազմակերպությունների հետ, ովքեր պատասխանատու կամ մասնակից են հոգեկան առողջության ոլորտում քաղաքականության մշակման և իրականացման համար, ինչպես նաև ստանալ տեղեկություններ մշակված հարցաշարին համապատասխան։ Դրանք նպատակ ունեն վեր հանել առողջապահական ծառայությունների ապակենտրոնացմանն ուղղված քաղաքականության առաջնահերթությունների, ռեսուրսների բաշխման և ինստիտուցիոնալ մակարդակում մարտահրավերների վերաբերյալ խնդիրները։

Հաշվի առնելով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի դրույթներով՝ խնդրում ենք համագործակցության շրջանակներում տրամադրել տեղեկությունները վերը նշված հարցադրումներին համապատասխան, ինչպես նաև խնդրում ենք Ձեր աջակցությունը Սպիտակի բժշկական կենտրոնի ներկայացուցչի հետ հարցազրույց իրականացնելու հարցում։

Հարցերի, ինչպես նաև լրացուցիչ պայմանավորվածություն ձեռք բերելու համար կարող եք կապ հաստատել հետազոտությունն իրականացնող փորձագետ Տաթևիկ Թոխյանի հետ հետևյալ հեռախոսահամարով՝ +37477341485։

Պատրաստ եմ վճարել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված սահմանաչափը գերազանցող տեղեկության տրամադրման համար։

Դիմող՝

ԼԻԼԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Signed by GEVORGYAN LILIT 7512930712
Date: 30.09.2024 20:13:44 +04:00
Հավաստված է EKENG-ի կողմից eID